



ՔԱՄԱԼ - ԳՈՒՆԱԸ - ՆՈՐԱՇԵՆ

Հայրենական մեծ պատերազմի հաղթական ավարտից հետո կարճ ժամանակում խորհրդային երկրում կյանքը համեմատաբար բարելավվեց, և մարդիկ սկզբնականորեն իրենց արմատները՝ որտեղից են եկել, ովքեր են իրենց նախնիները, նշել տոհմերի, գյուղերի, քաղաքների հոբելյաններ: Ուսումնասիրողները ոչ միայն դիմում էին տարեցների հուշերին, այլև գրավոր աղբյուրներին՝ գրքերին, արխիվային վկայություններին, պատմական հուշարձանների, եկեղեցիների, վանքերի վիճակագրություններին: Այս որոնումների ընթացքում հայտնաբերվում էին նոր տեղեկություններ, փաստեր, ճշտվում բնակավայրերի պատմական անուններ, դեպքեր ու իրադարձություններ:

Այդ մթնոլորտում 1963 թ. ՍՍՀՄ Միհաստրների խորհուրդը որոշում կայացրեց տեղանունների ուսումնասիրության վերաբերյալ, որի հիման վրա Մոսկվայի, Լենինգրադի և միութենական հանրապետությունների մայրաքաղաքների գիտական ու բարձրագույն ուսումնական հաստատություններում ստեղծվեցին նույնիսկ առանձին բաժիններ: Երևանի պետական համալսարանում ևս ստեղծվեց տեղանվանագիտության բաժին, և սկսվեց քարտագրական աշխատանքը:

Ամհատ բազմաթիվ մտավորականներ ևս սկսեցին այդ ուղղությամբ որոնումներ կատարել: Մեզ հետաքրքրում էր Տավուշ աշխարհն ու նրա գյուղերի պատմությունը: Պարզվեց, որ ՀՀ պետական պատմական կենտրոնական արխիվում

տեղեկություններ կան Ռուսաստանի Թիֆլիսի նահանգի Օսմշադիի տարածքի (դիստանցիի) բնակավայրերի մասին, ուր ներկայացված է բնակչության թվաքանակը՝ ծխերը և սեռային կազմը:

Համաձայն 1817 թ. հունվարի 26-ին գրանցված «Камеральное описание» մատյանի (բաղկացած է 185 թերթից) Օսմշադիի տարածքն ունեցել է 49 բնակավայր, որից հայկական գրիգորյան-լուսավորչական հավատի էին 13-ը, իսկ մյուս 36-ը՝ թաթար-մուսուլմանական: Հայկական գյուղերն են՝ Թաթլու՝ 41 ծուխ, 118 տղամարդ, 84 կին, Հախում՝ 13 ծուխ, 34 տ., 42 կ., մատյանի 36-37 թերթում գրված է՝ Գունաշ (հայկական) 13 ծուխ, 34 տ., 29 կ., Թուվուկլա (Բերդ)՝ 26 ծուխ, 68 տ., 38 կ., Թուուզանդ՝ 30 ծուխ, 96 տ., 82 կ., Կիզիբուլախ (Կարմիրաղբյուր)՝ 47 ծուխ, 89 տ., 89 կ., Մոսեսլի՝ 19 ծուխ, 60 տ., 40 կ., Գիրզան (Կրզեն)՝ 24 ծուխ, 64 տ., 69 կ., Դժինգան՝ 6 ծուխ, 16 տ., 17 կ., Կուլալի (Ղուլալի-Այգեձոր)՝ 38 ծուխ, 90 տ., 93 կ., Կարակալի (Ղրղի-Արծվաբերդ)՝ 17 ծուխ, 39 տ., 46 կ., Չորթան՝ 47 ծուխ, 104 տ., 77 կ., Բաղազանդ՝ 13 ծուխ, 40 տ., 43 կ.: Ամբողջությամբ վերցրած հայկական 13 գյուղում արձանագրված է 334 ծուխ՝ 852 տղամարդ, 749 կին՝:

Տասնչորս տարի հետո՝ 1831 թ., հայկական գյուղերին ավելացել է նաև Չարդախլու՝ գյուղը՝ 37 ծուխ, 146 տ., 128 կ., իսկ Գունաշ հայկական գյուղի անունն արձանագրվել է Թազաքանդ (Նորաշեն), որն ունեցել է 24 ծուխ՝ 16 տ., 71 կ.: Հետա-

¹ «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան»-ում (հտ. 1, Եր., 1986, էջ 976-977) գրված է. «Գունան - գյուղ Ելիզավետպոլի նահանգի Ղազախ գավառում: Հիշատակվում է ռուսական աղբյուրներում»: Մեր հիշատակած մատյանում գրված է՝ Գունաշ, և մինչև օրս ժողովուրդը գործածում է այդ ձևը:

² Տե՛ս ՀՀՊԿ կենտրոնական արխիվ, ֆոնդ 93, ցուցակ 1, գործ 8:

³ Տե՛ս նույն տեղը, գործ 43:

⁴ Տե՛ս նույն տեղը, ցուցակ 1, գործ 158:

գայում ուս հաշվառուները շարունակել են գործածել Թագաքանդ կամ Թագաքենդ ձևը: 1860 թ. այն թեև ունեցել է 21 ծուխ, բայց տղամարդկանց թիվը (81) գրեթե հավասարվել է կանանց թվին (82): Ընդամենը 13 տարի անց՝ 1873 թ., թեև ծխերի թիվն ավելացել է ընդամենը 10-ով (դարձել է 31), բայց բնակչությունն անել է ավելի քան երկու անգամ (169 տ., 180 կ.): Այս նույն թվականին վերը թվարկված հայկական գյուղերի ցանկում ավելանում է նաև Մամբարակ գյուղի անունը՝ նախկին Կարմիրի շրջան, որն ունեցել է 53 ծուխ՝ 300 տ., 235 կին:

Մեզ հետաքրքրող Գունաշ⁶ գյուղը գտնվում էր Տավուշ գետի և Գրա աջ վտակ Մոփսես (Սաբունջի)⁷ գետակի խառնուրդում: Կլիման շատ բարենպաստ է անասուններ պահելու, հող ու այգի մշակելու համար: Ձմեռը լինում է շատ մեղմ, իսկ գարունը բացվում է շուտ: Սակայն ավազակաբարո հարևաններից խուսափելու համար գունաշցիները 1850 թ. գարնանը տեղափոխվում են ներկայիս Նորաշեն, որը նախկինում եղել էր իրենց ձմեռանոցը և կոչվում էր Քամալ:

Քամալ բնակավայրի մասին տեղեկություններ ստանում ենք Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող № 365, № 6413, № 6705 և այլ ձեռագիր ավետարաններից⁸: Առաջինը գրել է Ավետիս երեցը 1668 թ. Թավուշ երկրի Քամալ գյուղում, երկրորդը՝ նույնպես, իսկ 3-րդը՝ 1679 թ. «Հարանց անապատ» վերնագրով, ստացվել է Ղարամուրատ անապատից, ի վերին Ջակամ, ստացող Ավետիս երեց Քամալեցի: Հասկանալի է, որ Ավետիս երեց Քամալեցու ջանքերով են պահպանվել այս ձեռագիր մատյանները: Թովուզ գյուղում 1637 թ. պահպանվում էր «Մաշտոց ձեռագ» ձեռագիր մատյանը:

Կարմիրաղբյուր (Վերին) գյուղի եկեղեցու պատի վրայի վիմագրությունները վկայում են, որ այն կառուցվել է 1601

թ., իսկ վերանորոգվել՝ 1702 թվին: Այս ժամանակներում Խորանաշատ վանքի եպիսկոպոս Հովհաննեսը կառուցել է նաև Չորաթան և Բերդ գյուղերի եկեղեցիները⁹:

Ինչպես ասվեց, ուսական տիրապետության տակ անցնելուց հետո Օսմաշահինը մտել է Թիֆլիսի նահանգի մեջ, իսկ երբ Գանձակը կոչվեց Ելիզավետապոլ, մտավ Ելիզավետապոլի նահանգի կազմի մեջ: Գունաշի բնակիչները Քամալ-Նորաշենում հաստատվելուց հետո շուրջ մեկ դար պայքարով պահպանել են Գունաշի տարածքները, մշակել հողը, վայելել Գրա բերքն ու բարիքը:

1905 թ. թուրքերը հրդեհում են գունաշցիների 40 հա այգիները: Բայց Լևոն Բեկի, Մելունց Օսմիրի և շամշահինցի հերոս մարդկանց ջանքերով հակահարված են ստանում: Ասում են՝ թուրքերը դրանից հետո միայն հասկացան, որ հայն էլ կովել ու վրեժ լուծել գիտի և սկսեցին հաշվի նստել Գրա հետ:

Ցավոք, 1927 թ. Գունաշն իր ողջ տարածքով՝ շուրջ 500 հա այգիներ, վարելահողեր ու արոտավայրեր, Խորհրդային իշխանության ստիպմամբ տրվեց հարևան Աղրբեջանի Թոուզի շրջանին, ուր սկսեցին բնակվել թուրքեր և գյուղը կոչեցին Ալիբեյլի: Նորաշենցիները և հարևան գյուղերի տարեցները արգահատանքով են հիշում Նորաշենի այդ տարիների դեկավարներին, որոնք ստորագրեցին Գունաշը թուրքին հանձնելու փաստաթուղթը: Եվ հիմա էլ հեզմանքով ասում են, թե այն տրվել է. «մի փութ աղի» դիմաց ...

Խորհրդային առաջին տասնամյակում Նորաշենը և մյուս գյուղերը կրել են՝ Դիլիջանի գավառի Օսմաշահինի գավառակ անունը: 1930 թ. սեպտեմբերի 9-ին դարձել է առանձին շրջան Երևանի ենթակայությամբ: 1952 թ. հունվարից մինչև 1953 թ. ապրիլը մտել է Կիրովականի օկրուգի կազմի մեջ: Սակայն կարճ ժամա-

¹ Տե՛ս նույն տեղը, գործ 170:

² Գունաշ - թուրքերեն է և գրվում է Կունաշլի-արևոտ, կունեղ-արեգուն, կունեշլի-արևուն (տե՛ս «Հայ-աղրբեջանական բառարան», Եր., 1978, էջ 63-64):

³ Տավուշ գետի աջակողմյան այս վտակը մի այլ աղբյուրում կոչվել է Սաբունջի:

⁴ Տե՛ս «Յուզակ ձեռագրաց Մաշտոցի անվան մատենադարան», հտ. Ա, Եր., 1965, էջ 307, հտ. Բ, Եր., 1970, էջ 314, 376:

⁵ Տե՛ս Բ. Մելյան, Հովհաննես արքեպիսկոպոս Օհանարը (Խորանաշատ վանքի հոգևոր առաջնորդի մասին), «Էջմիածին», 1991, № Ա-Գ, էջ 119-123:

նակում համոզվեցին, որ դա օգտավետ չէ, և նրան կրկին ինքնուրույն շրջանի կարգավիճակ տրվեց:

1953-1957 թթ. գյուղական խորհուրդը վերացրին՝ միացնելով հարևան Վերին կարմիրաղբյուրի խորհրդին և որպես մեղքերի թողություն՝ նորաշենցի Հովհ. Արզումանյանին նշանակեցին նախագահ, նրան հետո փոխարինեց Վ. կարմիրաղբյուրից Ա. Գիժարյանը: Սակայն դարձյալ համոզվեցին, որ երկու մեծ գյուղերի համար դա հարմար չէ. վերացրին՝ թողնելով նախկին ձևով:

Ծամշադիցի մտավորականների համառ ջանքերով 1990 թ. Ծամշադին օտար անունը փոխարինվեց իր պատմական Տավուշի շրջան անունով: Սակայն տավուշցիների ուրախությունը կարճ տևեց: 1995 թ. դեկտեմբերին միացվեց իջևան, Նոյեմբերյան, Դիլիջան կառուց-

վածքի մեջ և տրվեց Տավուշի մարզ անունը: Չանցած մեկ տարի՝ այդ կառույցի դեմ սկսեց բողոքել ժողովուրդը՝ գրելով պարբերականներում, հնչեցնելով խորհրդրականություններում: Նրանք գտնում են, որ սահմանամերձ այդ շրջանների ինքնուրույն զարգացման համար նպատակահարմար չէ այդ կարգավիճակը:

Քամալ-Գունաշ-Նորաշենը գիտությանը տվել է ակադեմիկոսներ, դոկտորներ, թեկնածուներ, գեներալ, տասնյակ բարձրաստիճան զինվորականներ, մանկավարժներ: Նրա նվաճումների մասին գրվել են գրքերում, պարբերականներում:

Համառոտ գծերով այսպիսին է եղել Քամալ-Գունաշ-Նորաշեն գյուղի անցած ուղին պատմության դարավոր հուլովություն:

Բ. Գ. ՄԵԼՅԱՆ